

ՀՏԴ 338.2

**ԻՆՈՎԱՑԻՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐՈՒԺԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ՖԼՈՐԱ ՍՈՂՈՅԱՆ¹, ԱԻԴԱ ՕՐԴԻՆՅԱՆ²

¹Երևանի պետական համալսարան

²Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

Համաշխարհային տնտեսության զարգացման ներկա փուլում, երբ կայուն և բարձր տնտեսական աճի ապահովման առանցքային գործոնը պաշարների արդյունավետ օգտագործման միջոցով մրցակցային առավելությունների ձեռքբերումն է, տնտեսական զարգացման հիմնական ուղին բացառապես կարող է պայմանավորվել ինովացիոն քաղաքականության մշակմամբ և դրա հետևողական իրականացմամբ: Տնտեսական զարգացման այս ուղղությունն ենթադրում է նորագույն տեխնոլոգիաների կիրառման վրա հիմնված տնտեսության փոխակերպման մոդելի կառուցում, որի հիմքում պետք է դրված լինի տնտեսավարող սուբյեկտների կողմից ինովացիոն գործունեության իրականացման տեսլականը՝ միտված նորարարական լուծումներով միջազգային շուկաներ թափանցելուն և ոլորտում մրցակցային առավելությունների հասնելուն:

Բանալի բառեր. ինովացիոն քաղաքականություն, բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն, նորամուծություն, արդյունավետություն, մրցակցային առավելություն, ռեսուրսների սահմանափակություն:

Տնտեսության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ճյուղի զարգացման ուղղությամբ համալիր ծրագրերի մշակումն ազգային տնտեսությունների ինովացիոն զարգացման մոդելի ձևավորման համատեքստում առանցքային դեր ունի: Դրա վկայություն պետք է համարել այն, որ վերջին տասնամյակում համաշխարհային տնտեսության աճի արագ տեմպերը հիմնականում պայմանավորված են եղել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների նորամուծական սրընթաց զարգացմամբ և տնտեսության ճյուղերում դրանց հետևողական կիրառմամբ: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ճյուղերը բնութագրվում են գիտատար և տեխնոլոգիատար ապրանքների արտադրությամբ և ծառայությունների մատուցմամբ, որոնց իրականացման ծախսումների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ ունեն գիտահետազոտական աշխատանքները և ժամանակակից տեխնոլոգիաները: Ընդ որում՝ մասնավոր հատվածում բարձր գիտատարություն ենթադրող ծառայություններն իրականացվում են ֆի-

նանսական, տեղեկատվական և արդյունաբերական ճյուղերում, իսկ հանրային հատվածում այն մեծապես կենտրոնացված է կրթության և առողջապահության ոլորտներում: Մասնավոր և հանրային հատվածներում բարձր գիտատարություն ենթադրող ծառայությունների, ինչպես նաև միջին և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ճյուղերի արտադրության մասնաբաժինը 2016 թվականի դրությամբ կազմել է համաշխարհային ՀՆԱ-ի մոտ 30 տոկոսը [1]:

Բարձր գիտատարություն ենթադրող ճյուղերն, ի տարբերություն տնտեսության այլ ոլորտների, բնորոշվում են արտադրանքի թողարկման ծախսումների կառուցվածքում ինովացիոն ներդրումների (R&D expenditures) միջինից բարձր մասնաբաժնով: Համաշխարհային տնտեսության կառուցվածքում գիտատեխնոլոգիատար ճյուղերի ընդլայնման հետ կապված՝ ինովացիոն զարգացմանն ուղղված համաշխարհային ծախսումները 2000-2015 թթ ընթացքում ավելի քան կրկնապատկվել են՝ կենտրոնացվածության մեծ աստիճան ունենալով հատկապես Միացյալ Նահանգներում, Չինաստանում և Ճապոնիայում, որտեղ իրականացվում են նորարարություններին ուղղված համաշխարհային ծախսումների ավելի քան 50 տոկոսը [2]: Այս փաստը վկայում է վերոնշյալ երկրների տնտեսական զարգացման մոդելներում ինովացիոն քաղաքականության կիրառման գերակայության և առաջնայնության մասին:

Հայաստանի Հանրապետությունը, տիրապետելով մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատանքային պաշարների, ունի տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտը զարգացնելու և ընդլայնելու հսկայական ներուժ: Այս հնարավորությունների արդյունավետ օգտագործումը և ճիշտ կառավարումը կարող են լինել տնտեսության զարգացման ինովացիոն մոդելի ձևավորման, ինչպես նաև աշխատանքի արտադրողականության և միջազգային շուկաներում ազգային մրցունակության բարձրացման հզոր խթան:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ՀՀ կառավարության կողմից ճանաչվել է որպես ՀՀ տնտեսության զարգացման գերակա ճյուղ [3]: Ռազմավարական այս քայլով ՀՀ կառավարությունը մեծապես աջակցում է հանրապետությունում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի հետևողական զարգացմանը՝ նպաստելով ոլորտում համակարգված գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը և միջազգային շուկաներում ոլորտում գործող կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը:

ՀՀ-ում գործող տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում ծառայություններ մատուցող կազմակերպությունների արագ տեմպերով աճը գործարարության վարման տեսանկյունից վկայում է ոլորտում

գործունեություն ծավալելու գրավչության և զարգացման լայն հնարավորությունների մասին: Հայաստանում իրականացվող ծառայությունների կառուցվածքում խորհրդատվական, ծրագրային ապահովման և համացանցային ծառայությունների մատուցման աշխատանքները ոլորտում երաշխավորում են զարգացման և զբաղվածության բարձր մակարդակ: 2011-2017 թթ. ընթացքում զբաղվածության տարեկան միջին 16 տոկոս աճի տեմպի պայմաններում, ոլորտի կազմակերպություններն ապահովել են տարեկան հասույթի մոտ 350 տոկոս աճ, ինչը վկայում է թողարկվող արտադրանքի բարձր պահանջարկի, ինչպես նաև ոլորտում արտադրողականության աճի բարձր տեմպերի մասին [4]:

Հայաստանում գիտատեխնոլոգիական գործունեության զարգացմամբ հանդերձ, ոլորտում այնուամենայնիվ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք արագ զարգացող տեխնոլոգիական աշխարհում կարող են բացասաբար ազդել Հայաստանի մրցունակության վրա: Միայն այդ խնդիրների հետևողական լուծման պայմաններում կարող են ստեղծվել անհրաժեշտ նախադրյալներ մրցակցությունում չպարտվելու և հանրապետությունում ինովացիոն զարգացմանը բարձր տեմպեր հաղորդելու համար: Հայաստանում գիտա-տեխնոլոգիական գործունեության զարգացման առջև ծառայած հիմնախնդիրներից առաջնայինը ոլորտի աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մրցունակ մասնագետների պատրաստումն է, որը ենթադրում է կրթական համակարգի բարելավում և գիտահետազոտական և տեխնոլոգիական կենտրոններում պրակտիկ դասավանդման գործընթացների արդյունավետության բարձրացում: Այսօր արդեն ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների մասնագիտացմամբ սովորում են զգալի քանակով ուսանողներ, սակայն շուկան դեռևս չի բավարարում ոլորտի բարձրորակ մասնագետների մեծ պահանջարկը [5]: Վերջինս բխում է նաև հանրապետությունից մրցունակ մասնագետների զգալի արտահոսքից, ինչը հիմնականում պայմանավորված է միջազգային շուկայի համեմատ ոլորտում ոչ մրցունակ վարձատրությամբ: Մեկ այլ հիմնախնդիր, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում հանրապետությունում գիտա-տեխնոլոգիական գործունեության շարունակական զարգացման համար, ֆինանսական ռեսուրսների հասանելիության խնդիրն է: Չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիների ընթացքում հանրապետությունում գիտա-տեխնոլոգիական ծրագրերի զարգացման ուղղությամբ պետական աջակցության դերը զգալիորեն մեծացել է, այնուամենայնիվ, ոլորտի զարգացման լուրջ մարտահրավերներից է ֆինանսական ռեսուրսների ներգրավման դժվարամատչելիությունը: Սա պայմանավորված է այն հանգա-

մանքով, որ ֆինանսական և վարկային կառույցները սկսնակ տնտեսավարող սուբյեկտների կողմից մշակված զարգացման ծրագրերի ֆինանսավորումը համարում են բարձր ռիսկային: Միևնույն ժամանակ, նման նախագծերում բարձր ռիսկային ներդրումների իրականացման կառուցակարգերը վենչուրային ներդրողների կողմից դեռևս համարվում են ոչ կատարյալ՝ պայմանավորված օրենսդրական և ներդրումային դաշտում գործող կարգավորումների ոչ լիարժեքությամբ: Նման պայմաններում գիտատեխնոլոգիական գործունեության ծավալման հիմնական ուղին շարունակում է մնալ սեփական միջոցների հաշվին նախագծերի ֆինանսավորումը, ինչը, սակայն, սահմանափակ է և ոչ միշտ հասանելի: Ոլորտում գործունեություն ծավալող տնտեսավարող սուբյեկտների համար մեկ այլ հիմնախնդիր է համարվում թողարկված պրոդուկտների իրացվելիությունը տեղական և միջազգային շուկաներում: Այս առումով, իրացվելիության ոչ բավարար մակարդակը տեղական շուկայում պայմանավորված է թողարկված պրոդուկտների բարձր գներով, ինչը հիմնականում պայմանավորված է պրոդուկտի ինքնարժեքի կառուցվածքում աշխատանքային և անուղղակի ծախսումների համեմատաբար բարձր տեսակարար կշիռներով: Միևնույն ժամանակ, չնայած ոլորտում թողարկված արտադրանքի արտահանման ծավալների կայուն աճին, միջազգային շուկայում արտադրանքի իրացվելիության հետ կապված առկա են լուրջ բարդություններ՝ հիմնականում պայմանավորված երկրի, ինչպես նաև տնտեսավարող սուբյեկտի նկատմամբ ոչ բավարար վստահելիության և ճանաչելիության մակարդակներով:

Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը պահանջում է պետական աջակցության համալիր ծրագրերի մշակում և ոլորտում գործող հատկապես սկսնակ տնտեսավարող սուբյեկտների գործունեության խրախուսում: Հանրապետությունում ինովացիոն գործունեության զարգացման և խրախուսման ուղղությամբ մշակվող պետական աջակցության ծրագրերը պետք է ունենան ռազմավարական զարգացման հայեցակետ և ուղղված լինեն ոլորտում մրցակցության բարձրացմանը, ֆինանսական պաշարների մատչելիության ապահովմանը, իրավական և ներդրումային արգելքների վերացմանը, ինչպես նաև միջազգային հանրույթում երկրում թողարկված արտադրանքի նկատմամբ ճանաչելիության և վստահելիության բարձրացմանը: Միևնույն ժամանակ, բարձր մասնագիտական որակներ ունեցող աշխատանքային պաշարների պատրաստումն ու վերապատրաստումը կրթական համակարգի բարելավման միջոցով ևս պետք է հանդիսանա այս ուղղությամբ ռազմավարական զարգացման կարևորագույն քայլ:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ համաշխարհային տնտեսության մեջ ռեսուրսների սահմանափակության հիմնախնդիրը տնտեսական գործունեություն իրականացնելիս պահանջում է գնահատել ռեսուրսների օգտագործման այլընտրանքային ուղիները՝ ընտրելով դրանցից ամենաարդյունավետը: Սրանով պայմանավորված՝ յուրաքանչյուր երկիր պետք է մասնագիտանա տնտեսավարման այն գործունեությունների մեջ, որոնք միջազգային տնտեսավարման հարաբերություններում տվյալ երկրի համար կարող են ապահովել մրցակցային առավելություն: Հայաստանի Հանրապետությունը, ունենալով մասնագիտական բարձր պատրաստվածություն և ներուժ ունեցող աշխատանքային պաշարներ, պետք է հետամուտ լինի դրանց առավելագույն արդյունավետությամբ օգտագործմանը և միջազգային տնտեսական հարաբերություններում այդ ուղղությամբ մրցակցային առավելությունների ձեռքբերմանը: Ինովացիոն զարգացման ներուժի բացահայտումը և երկրի տնտեսական զարգացման հնարավորությունների արդյունավետ օգտագործումը լավագույն մեկնարկը կարող են հանդիսանալ ինովացիոն տնտեսության ձևավորման ուղղությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂՔՈՒՐՆԵՐ

1. **Olga A. Romanova, Grigoriy B. Korovin, Evgeny A. Kuzmin**, “Analysis of the Development Prospects for the High-Tech Sector of the Economy in the Context of New Industrialization”, 2017, p. 5

2. **National Center for Science and Engineering Statistics (NCSES)**, 2018, Science and Engineering Indicators, Chapter 4, Research and Development: US Trends and International comparisons

3. **ՀՀ Կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 442-Ն որոշում**, Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Գլուխ 4, Գլուխ 1, էջ 61:

4. **EIF Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամ**, 2018, «Հայաստանի ՏՀՏ ոլորտի հետազոտության հաշվետվություն», ոլորտի վիճակագրություն, էջ 56:

5. **Ի-Վի Քոնսալթինգ**, 2019, «Հայաստանի ազգային մրցունակության զեկոյց. Աշխատատեղերի ապագան Հայաստանում» էջ 20:

ОЦЕНКА ИННОВАЦИОННОГО РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

ФЛОРА СОГОЯН¹, АИДА ОРДИНЯН²

¹Ереванский государственный университет

²Национальная академия наук Республики Армения

На современном этапе развития мировой экономики, когда ключом к обеспечению устойчивого и высокого экономического роста является получение конкурентного преимущества за счет эффективного использования ресурсов, основной путь к экономическому развитию может быть обусловлен исключительно развитием и последовательным применением инновационной политики. Это направление экономического развития подразумевает построение модели экономических преобразований, основанных на применении новейших технологий, которые должны основываться на видении бизнес-структур инноваций для проникновения на международные рынки с помощью инновационных решений и получения конкурентных преимуществ в этой области.

Ключевые слова: инновационная политика, индустрия высоких технологий, инновации, эффективность, конкурентное преимущество, ограниченность ресурсов.

ASSESSMENT OF INNOVATIVE DEVELOPMENT POTENTIAL IN THE REPUBLIC OF ARMENIA

FLORA SOCHOYAN, AIDA ORDINYAN

Yerevan State University

National Academy of Sciences of the Republic of Armenia

At the present stage of world economic development, when the key to ensuring sustainable and high economic growth is to gain a competitive advantage through the efficient use of resources, the main path to the economic development can be exclusively conditioned by the development and consistent application of an innovation policy. This direction of economic development implies building a model of economic transformation based on the application of the latest technologies, which should be based on the vision of business entities to innovate in order to penetrate international markets with innovative solutions and gain a competitive advantage in the field.

Keywords: innovation policy, high technology industry, innovation, efficiency, competitive advantage, resource constraint.

Ներկայացվել է խմբագրություն 02.04.2020
Երաշխավորվել է տպագրության 27.04.2020